

Խեղճ մանչը, խորին հառաջանք
սկսաւ օդապարիկը թեթևնել։ Եր-
բեմն երբեմն կանկ կ'առնուր։

— Կ'ելլենկը, կը հարցնէր։

— Զենք ելլեր, շարունակ կը պա-
տասխանէին իրեն։

— Կը շարժի, ըսաւ վերջապէս։

— Շարունակէ զեռ ևս, կը կնեց ի-
րեն ֆէրկըսըն։

— Կ'ելլէ, ապահով եմ։

— Շարունակէ, ըսաւ իրեն քէն-
նըտի։

Եւ ձոյ յուսահատաբար յետին հա-
տուած մը առնելով, նաւակէն դուրս
նետեց։ Վիկորիան հարիւր ուրքի
չափ բարձրացաւ, և բոցարծարծին օդ-
նելովը շուտ մը շրջակայ կատարներէն
վեր ելաւ։

— Հիմա ձոյ, ըսաւ տոքդորը, զեռ
ևս բաւական հարստութիւն կը մնայ
քեզի. եթէ մինչև մեր ճամբորդութեն
վերջը կարենանք այդ պաշարը պահել,
ահա կենացդ բոլոր մնացած օրերը կը
հարստնաս։

Ձոյ բան մը չպատասխանեց, ու
հետաբար մետաղներուն դէզին վրայ
երկնցաւ։

— Տես, սիրեցեալդ Տիք, ըսաւ տոք-
դորը, ինչ զօրութիւն ունի այդ մետա-
ղը աշխարհիս ամենէն բարի մանչուն
վրայ։ Ո՞րչափ ախտերու, ո՞րչափ անյագ
իդերու, ո՞րչափ ոճիրներու պատճառ-
կրնայ ըլլալ այդպիսի հանքի մը ծանօ-
թութիւնը։ Շատ անմիտիթար մտածու-
թիւն մըն է։

Իրիկուան դէմ վիկորիան իննը-
սուն մղոն դէպ 'ի արևմուտք յառաջեր
էր. այն ատեն շիտակ գծով Զանդիպա-
րէն հագար չորս հարիւր մղոն հեռի կը
գտնուէին։

Իր շարունակուի։

ՀԵՆՐԻԿՈՍ ԻՊՍԵՆ

Ո՞վ է արդեօք Հենրիկոս իպսէն։
Հարցում մը զոր կ'ընէ թերեւս հետա-
քրքրութեամբ մեր ներկայացուցած
պատկերին նայող հարիւր հոգիէն վաթ-
սունը։

Հենրիկոս իպսէն հոչակաւոր, կար-
գէ դուրս և մեծանուն Նորուեկիացի
բանաստեղծ մէկ. ծնունդ այն երկրին,
որուն մատենագրութիւնը արժանի է
ծանօթութեան. ինչպէս արժանի էր
երկար ժամանակ որ իր քաղաքագի-
տական սկզբունքները ճանչնար և օրի-
նակ առնէր իրեն բոլոր Եւրոպա, որ
ուրիշ բան չէր ըներ բայց եթէ հեծել
և տառապիլ այլ և այլ տեսակ բռնա-
ւորաց տակ ներքին և արտաքին պա-
տերազմներով, և սաստիկ ու արիւնա-
հեղ յեղափոխութեամբ։

Իպսէն 1828 տարւոյն մարտի 20ին
հարաւային Նորուեկիոյ փոքրիկ քաղա-
քի մը մէջ ծնաւ։ Իր մանկական հա-
սակը չքաւորութեամբ անցուց. բայց
այնպիսի խեղճ կեանք մը բաւական չե-
ղաւ տկարացնելու իր գեղեցիկ արուես-
տից վրայ ունեցած սաստիկ սէրն, առ
որ ծնած էր, և առաւելապէս թատե-
րական բանաստեղծութեան, զոր շատ
պայծառացուց Նորուեկիոյ մէջ։

Իր առջի թատրերգութիւնը կատի-
լինան եղաւ, զոր շարագրեց 1850ին
22 տարուան հասակին մէջ. յորում
կը տեսնուին նորագիւտ մուածութիւն-
ներ և զրուցուածքներ, որ նշանակ են
իպսէնի եղական հանճարոյն։ Նիւթը
Սալուստիոսի քաջածանօթ պատմու-
թիւնէն հանած է. բայց ո՞րն է արդեօք
Նորուեկիացի բանաստեղծին մեզի ըն-
ծայած կատլիինան։ Ոչ Սալուստիոսի
նկարագրած խոռվարար և ապակա-
նեալ բարուք անձը, այլ բնութեամբ
ազնուական և առաքինի Հռովմայեցի
մը, դիւցազն մի՛ որ ժամանակին խեղ-
ճութենէն, խոռվութիւններէն և իր ժա-
մանակցաց ախտերէն ու մոլութիւննե-

րէն ապականեալ, իր հայրենեաց տըղ-
մին մէջ կ'ընկղմի.

Իր այս առջի երկասիրութեանը քիչ
ժամանակի մէջ ուրիշներ ալ յաջորդե-
ցին, որ միշտ աւելի կը վկայէին իր բա-

կան քերթուած մը 'ի թատր հանելով,
իր քաղաքակիցներէն անոնք որ անպա-
տիւ եղան նոյն գրութեամբ՝ սկսան իրեն
զրպարտիչ, կեղծաւոր և անբարոյա-
կան կանչել, ինչու որ իրենց անբարո-



ՀԵՆՐԻԿՈՍ ԻԳՍԵՆ

նաստեղծական հանճարոյն եղականու-
թեանը: Բայց իպաէն իր փառաց ճանա-
պարհը բաւական ժամանակ խրթնա-
ցոյց և դժուարացոյց: Իր Սիրոյ կատա-
կերդուրեամբը թորնաղի պէս հենդնա-

յական կեանքը կենդանացոյց 'ի տե-
սարանի:

Բայց չարախօսութիւնը, հալածու-
մը, որոց նշաւակ եղած էր իպաէն, ար-
գելք չեղան քիչ ժամանակի մէջ ուրիշ

ողբերգութիւն մը հրատարակելու, որ
շատ համբաւ հանեց և կը կոչուէր չե-
տամուշտք դարուն Նորուեկիոյ քաղա-
քական պատերազմէն հանած էր, ո-
րուն մէջ մտուց և ներկայ ժամանակաց
դէպքեր ու պարագաներ:

1864ին ճամբորդութիւն մ'ըրաւ իսկ
սէն, և անցնելով Գորէնհակէն, Պէռ-
լինէն, Տրեգտայէն, Վիէննայէն, Դրիէ-
ստէն և Վենետիկէն, ետքը Հռովմ
գնաց, ուր երկար ժամանակ կեցաւ,
և այս միջոցս երկու թատրերգութիւն
՚իլոյս հանեց Պրանտ և Բէր Կինդ ա-
նունով, որոց երկուքն ալ սաստիկ կեր-
պով կը հարուածեն, մին զշահալիքն-
դրութիւն և միւսն զկեղծաւորութիւն:

Նորուեկիոյ խորհրդարանը, զչենրի-
կոս իպսէն, զնոր Յորնազը վարձատրեց
տարեկան հասոյթ մը կապելով, որ 'ի
պատիւ է ոչ միայն մեծանուն քերթո-
ղին, այլ և իր հայրենեացը որ գիտէ
երեսէ չժողովուլ իր արդիւնաւոր ան-
ձինքը:

ՀՈՌՎՄՍՅ ՍԿԶԲՆԱՌՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԻ

(Տես Երես 244.)

Հռովմայեցէք զիրենք պատերազմի
նուիրած ըլլալով՝ և զայն իրրեւ միակ
արուեստ սեպելով, ամենայն ճիզն թա-
փեցին կատարելազործելու: Աստուած
մը անշուշտ եղած ըլլալու է, կ'ըսէ վե-
գետիոս՝ լէզէնն իրենց թելադրողը:

Մտածեցին որ լէզէննին զինուորաց
ամեն ժողովրդենէ՝² աւելի զօրաւո-

1 Գիրք Բ. Գլ. Ա.

2 Տես 'ի Պաղեր. և 'ի Յովեապոս, Յառաջու Հրէա-
կան պատերազմին Գիրք Գ. Գլ. 6. թէ որոնք էին
հռովմայեցի զինուորին զէնքերը: Այս վերջինը կ'ը-
սէ թէ քիչ տարբերութիւն կայ Հռովմայեցի
զինուորաց և բեռնաբարձ ձիերուն մէջ: » Տամն
և հինգ օրուան համար կերակրեզննին, կ'ըսէ կի-
կերն, և ինչ որ պէտք էր թէ իրենց համար և
թէ պաշտպանուելու՝ մէկտեղ կը տանէին. իսկ
զինուց նկատմամբ՝ ձեռքերնուն պէս զանոնք կը
դորժածեն:

րագոյն և ծանրագոյն վասարական և
պաշտպանողական զէնքեր տալ հարկ
էր:

Այլ որովհետեւ պատերազմի մէջ այն-
պիսի բաներ կան, զորս ծանր բանակ մը
անկարող է կատարել, ուղեցին որ լէ-
զէննին մէջ ըլլայ թեթև գունդ մ'ալ որ
ելէ պատերազմի և ըստ հարկին լէ-
զէննը անոր մէջ ապաստանի. որ նաև
այրուձի, կառաձիգ մարդիկ և պարա-
ւորներ բովանդակէ, որպէսզի փախրս-
տականները հալած ելով յաղթութիւնը
լիակատար ընեն. որ նաև տեսակ տե-
սակ պատերազմական մեքենաներով
պաշտպանուած ըլլայ՝ զորս 'ի միասին
կը տանէին, և ամէն անգամ ամրա-
ցած՝¹ ատենը, ըստ վեգետիոսի, բեր-
դաքաղաքի նման ըլլայ:

Ուրիշներէն աւելի ծանրագոյն զէն-
քեր ունենալու համար՝ քան զմարդ
վերնագոյն ըլլալու էին. ահա այսպէս
եղան. յարատեւ աշխատութեամբ՝ ոյժ,
և կրթութեամբք ճարտարութիւն աւել
ցընելով, որ ոչ այլ ինչ է բայց եթէ
մեր ունեցած ոյժերուն ճիշդ բաշխումը:

Կը դիտենք հիմա որ մեր բանակները
զինուորաց² ծայրայեղ աշխատանօքը
շատ կորուստ կ'ընեն. և սակայն անտա-
նելի աշխատանօք էր որ Հռովմայեցիք
կը պահպանէին իրենք զիրենք: Այս
բանիս պատճառը, կարծեմ թէ շարու-
նակ աշխատելնէն էր. մինչդեռ մեր զի-
նուորները միշտ սաստիկ աշխատութե-
նէն, վերջին սաստիճանի պարապութե-
մէջ կ'կյնան որ է զիմսաւոր պատճառ
իրենց ջարդուելուն:

Պէտք է որ 'ի մէջ ածեմ հոս մատե-
նազրաց Հռովմէական³ զօրաց կրթու-

1 Տուկուլ. Ա. 2. Գլ. 15:

2 Մանաւանդ երկիրը փորելէն:

3 Տես Վեգետիոս, Գիրք Ա. Տես Տիասոս Լիւլոս
Ա. 26. Գլ. 51. Ակիսիլոս Ա. փրիկեցւոյն նոր Կար-
քեդոնին առնուելէն ետքը իր զինուորաց ընել
առուած կրթութիւնքը: Մարիսոս իր ծերութեանը
չնայելով ամեն օր Արիսեան գաշտը կ'երթար:
Պոմպէոս յիսուն և ութը տարուան, զինեալ կ'եր-
թար ամեն օր երիտասարդաց հետ պայքարելու,
չի կը հեծնէր և սանձարձակ կը վազէր, և արդե-
ընկեցութիւն կ'ընէր: Պլուտարքոս, Վարչ Մարիոս
և Պոմպէոս: